

Chicago

Մարտ 2, 1953

Հոգեշնորհ  
Տ. Վահան Մ. Վրդ. Նազարէթեան  
Նախագահ Հոգաբարձութեան  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Շիրակօ, ԻԼԼ.

Հոգեշնորհ հայր սուրբ,

Ստացուած է Յունվար 18 թուակիր Զեր գրութիւնը որով կը տեղեկացնէիք թէ Զեր նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ հոգաբարձական մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ, կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ յիշեալին.-

Տիարք Խաչիկ Ճէրանեան  
Յովհաննէս Թաթոեան  
Հայկ Փետեան  
Կարապետ Գալգանեան  
Հաճի Տիլկէրեան

Կ'օրհնենք նորընտիր Հոգաբարձուները եւ վստահ ենք որ անոնք իրենց ջանքերը միացնելով պաշտօնի վրայ միասնորդ անդամներուն փքխատանքներին պիտի գործեն Աստուծոյ փառքին եւ մեր սուրբ Եկեղեցւոյն պայծառութեան համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ,

Մնամք Ձերմ սիրոյ ողջունիւ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ